

լարված ուշազրութիւն։ Աւսուցչի պարտաւորութիւնն է իմանալ թէ ով լաւ չէ հասկացել հարցը ով է կեսով չափ և ով է բոլորովին լսել և հասկացել։ Ակսով չափ լսողիցն ևս կարելի է պատասխան առնել ու լրացնել։ բայց ով որ ամենեին ուրիշ բան է պատասխանում։ քան թէ հարցին վերաբերեալը պէտքէ կարծ ու լուրջ կերպով հասկացնել որ շատ բանի համար ձեռք բարձրացնելը չպէտքէ լինի։

Երբ ուսուցիչը նայումէ որ ձեռք բարձրացնողները քիչ են, պարտաւոր է հարցը կրկնել, երեքրկնել և այլն, մինչեւ որ ձեռք բարձրացնողների թիւը շատանայ, Մի երկու երեքից պատասխան ստանալուց յետոյ, դարձեալ հարցնումէ թէ ով է այժմ հասկացել։

Եթէ առաջ ձեռք չբարձրացնողները այժմ բարձրացրել են, դոցանից մի քանիներին ևս հարցնէ։ Մի քանի նախադասութիւններ այդպէս առանձին առանձին ասելուց ու ասելալուց յետոյ, ինքն սկսումէ այդ բոլորը միացնել, ամբողջացնել և մի փոքրիկ պատմութիւն կամ խօսք յօրինել։ Ապա պահանջումէ որ աշակերտներից ոմանք ևս ամբողջը կրկնեն, Որպէս զի զիւրին լինի առանձին նախադասութիւններից ամբողջը կազմելը պէտքէ գոքա միմեանց հետ որ և է յարաբերութիւն և կապ ունենան։ Հարկաւոր է աշխատել, որ խօսակցութեան առարկան վերացական չլինի, այլ ըստ մեծի մասին նիւթական։ Պէտքէ աշխատել որ խօսակցութեան նիւթերը լինին այնպիսի, որոնց կարելի լինի ենթարկել աշակերտի զգայարանների ճանաչողութեանը։ Մասերը զննելիս պէտքէ կարգով գնալ կամ միշտ աշից զեպի ձախ և կամ ձախից գեպի աջ, վերից զեպի վար և կամ վարից գեպի վեր։ Այս կերպով մոքի մէջ շուտ է տպաւորվում նիւթը, բայց մի անգամ տպաւորելուց յետոյ, կարելի է խառն ի խուռն կամ մէջ ընդ մէջ ևս հարցնել։

Աշակերտները միշտ ամբողջ նախադասութիւններով պէտքէ պատասխանեն։ օրինակ եթէ մէկին հարցնումէս քո անունն ի՞նչ է, աշակերտը պէտքէ չասէ միայն—Ղազարոս, այլ պէտքէ ասէ, իմ անունը Ղազարոս է։ կամ Աարզիս է իմ անունը։

Ա. Բ.

---

### Ա Խ Ե Տ Ե Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն .

(Այս տարի Գ. Ճեմարանում Ընդհանուր պատմութենից բացի բերանացի, քննութենից գրաւոր քննութիւնն ևս եղաւ։ Աշակերտների գրաւոր պատասխաններից թէ Գ. և թէ Ե. զասարանից մի կամ երկու յօդուած հրատարակելու ենք։ Երարատի մէջ, որոնց նիւթը ամբողջութիւն էներկայացնեն։ Գ. զասարանում Հին աշխարհի կաւանդվի, Ե. զասարանում—Միջին գորեր, ներկայ յօդուածը Ե. զասարանի աշակերտ Թագէսս Պալեանի գրած պատասխանն է, որը կեղացիկ մի յօդուած կդոյցացնէ։) Խմբ.

Աւատականութիւնը սկսվումէ արևմտեան Եւրօպայում թ. դարի վերջը և այս միջնադարեան երեղիթը զիխաւոր աղքիւր զարձաւ այն փոփոխութիւններին, որոնց այնուհետեւ Եւրօպական հասարակութիւնը չորս դարի ընթացքում ենթարկվումքր.

Աւատականութեան սկիզբը գտնվումէ հին Գերմանացիների սովորութիւնների և կինցաղավարութեան մէջ, իսկ նորա հիմն զարձաւ արևմտեան հռովմեական կայսերութեան երկիրների բաժանումն զերմանական զէլէյտների (զօրագնղերի) և ազատ մարզիկների մէջ, որոնց օգնութեամբ թագաւորները նուաճումէին հողեր, Սովորաբար նուաճողները առնումէին երկրի՝ մասը, իսկ՝ թողնումէին նուաճականներին կամ թէ աեղացներին, Քայֆանումը լինումէր վիճակարկութեամբ և իւրաքանչիւր զէլէյտի անզամ նայումէր իւր բաժնին իրեւ աւար, որի հիտ կարող էր վարվել ինչպէս իւրեան հաճո՞ւ էր, որը նա ձեռք էր բերած իւր արինով, Այսպիսի բաժինները կոչվումէին ալլօղիական (հին գերմանական 1008—վիճակ — բառից) և այս կարգը կոչվումէր ալլօղիական կարգ, Յետոյ իւրաքանչիւր հողատէրը գուրս էր գալիս զէլէյտութենից և կոչվումէր բարօն (հին գերմանական հարօս — ազատ — բառից), ևսկ թագաւորները բացի ալլօղիական բաժիններից ստանումէին և այն հողերը, որոնք մի ժամանակ պատկանումէին արևմտեան հռովմեական կայսրներին և որոնք գումաններ (հողեր) էին կոչվում և որոնց կառավարումէին Ֆրանսիայում մայիսօրումը կամ պալատական մէրերը, Սա կոչվումէր ալլօղիական կարգ, Սորանից յառաջացաւ աւատականութիւնը կամ թէ կալուածաղետական կարգը հետեւեալ կերպով.

Պատերազմը վերջանալուց յետոյ բարօնները, անդադար երկիւ դ կրելով տեղացի կամ նուաճված բնակիչներից և շրջակայ ազգերից իւրեանց համար հզօր պաշտպաններ էին պատռում: Բայց սկզբում թագաւորներից աւելի հզօր ոչ ոք չկար, Թագաւորները բարօններին առնումէին իւրեանց հովանառութեան տակ մէծ սիրով, պայման դնելով որ բարօնները նոցա համար պատերազմ գնան կամ ծառայեն նոցա արքունիքում կամ մի որեիցէ նահանգում: Որքան նոքա հաւատարիմ էին և որքան ջերմուանգ էին կատարում իւրեանց պաշտօնները, այնքան թագաւորները նոցա սիրումէին և նոցա տալիս էին իւրեանց գոմէններից բաժիններ ի վարձատրութիւն նոցա հաւատարմութեան: Այդ բաժինները կոչվումէին բէնէֆիս (պարգև) Փէօդ (կալուած) և լէն (բաշխումն կամ փող), Փէօդ ստացողները թագաւորի վերաբերմամբ կոչվումէին վասալներ, իսկ թագաւորը նոցա վերաբերմամբ կոչվումէր սիւզերէն, Ակզեռում Փէօդներ տրվումէին ժամանակաւորապէս, իսկ Մհծն Կարոլոսի թոյլ յաջորդները կամոյ ակամոյ ստիպված էին Փէօդներ տալու ցմահ: Այսպիսով վասալները, իւրեանց ալլօղիական բաժիններին Փէօդներ միացնելով, այնչափ զօրացան, որ ստիպեցին թագաւորներին իւրեանց տէրութեան ժամանակաւորապէս ստիպեցան իւրաքանչիւր ստացան փող կտրիլու, սեպհական զօրք ունենա-

լւա, իւրեանց անունով և զօրքով պատերազմ՝ գնալու և վարչելու իւրեանց իշխանութեան տակ գանգած երկրագործների հետ ինչպէս որ իւրեանց հաճոյ էր։ Սորա հետեւանքն այս եղաւ որ

Ա. Թագաւորների իշխանութիւնը բոլորովին ընկաւ, երկիրը բազմաթիւ մասերի բաժանվեցաւ, իւրաքանչիւր հօղատեր իւրեան անկախ հրատարակելով յարձակվումէր քաղաքների, գիւղերի վերայ, քանդումէր, կործանումէր, այրումէր ինչ որ գտնումէր և բնակիչներին գերի էր տանում։ Աչա այդ ժամանակ կազմվեցաւ գերմանական այն առածը թէ -rauben ist kein Schande, das thun die Besten im Lande, (կողոպտելն ամօթ չէ, որովհետեւ այս անումն երկրի լաւագոյնները)։ Թշնամի ազգերը, օգուտ քաղելով թագաւորների թուլութենից, յարձակվումէին նոցա վերայ. և որովհետեւ թագաւորները չէին կարող միացնել իւրեանց իշխանութեան տակ եղած վասալներին, ուստի և յաղթվումէին։ Այս յարձակմունքի հետեւանքն այն եղաւ, որ Նորմանները թ., գարում հիմնեցին հիւսիսային Պրանսիա-յում Նորմանդիա դքսութիւն, ԺԱ. գարում հարաւային Բուլիայում՝ Նեապոլի դքսութիւն և 1066 թուին բոլորովին տիրեցին Քրիստոնեային։

Բ.) Կոյն ինքն կեանքի եղանակը արևմտեան Եւրօպայում ցոյց էր տալիս որ ժողովրդի զիւսաւոր պարապմունքն ու զբաղմաններն պատերազմ՝ էր։ Միջնադարեան քաղաքները շրջապատված էին ատամնաւոր պարիսպներով և նոյն իսկ աները նմանումէին ամրոցների, գիշերը քաղաքի վերայ շըլ-թաներ էին ձգում։ Աչա այս բազմաթիւ նախազգուշութիւնները ցոյց են տալիս թէ վտանգը միշտ սպասվումէր, Եթէ որ քաղաքացիները արտաքին խաղաղութիւնը զընումէին արիւնով կամ ոսկով, այն ժամանակ սկսվումէին համարուեստաւորների խոռովութիւնները և կուները պատրիկների (մածամեծների) հետ և միմեանց մէջ։

Հասարակական կեանքի անհանգիստ զրութիւնը երեւումէ զիւ գացիների մէջ ևս Իւրաքանչիւր բարձրաւանդակի և բլրի վերայ շինված էին աւատականների կամ կալուածապեաների ամրոցներ։ որոնց շինելիս նպատակը եղած է ոչ թէ կեանքի յարմարութիւնը, այլ ապահովութիւնը և որոնք զէնքի հետ աւատականութեան զիւսաւոր պայմանն էին կազմում։ Խեղճ գիւղացիները կարծես վախենալով մօտեցնումէին իւրեանց խրճիթները այս ամրոցներին նոցա իւրեանց ապատանարան համարելով։ Անգերն ևս շրջապատված էին ատամնաւոր պարիսպներով, բայց չէին կարողանում թշուառներին պաշտպանել իւրեանց ծածկոյթի տակ, որից կարելի է հետեւեցնել թէ աեղի սուրբ նշանակութիւնը կորած էր և թէ նորա մինչև անզամ չէին կարող յարձակմունքից և կողոպտմունքից ազատ մնալ։ Բարեպաշտ իշխանները կամ հողատերերը շատ անդամ նուիրումէին վանքերին զանազան հօղեր և կալուածներ, որը վանահայրերն իւրեանց էին սեպհականացնում և այդպէսվ նորա մի մի կալուածատերեր զարձած իւրեանց ժամանակը անցուցնումէին պատերազմներով և որոսկ, մոռանալով իւրեանց սուրբ կոչումն խաղաղութեան աւետարեր լինելու։

Գ) Արտաքին կեանքը միևնույն անկանոնութիւնն էր ներկայացնում ինչ որ ներքինը։ Աւատականութեան ժամանակ բուն մոքով ազգեր չկային այլ կային միմեանց թշնամանող դասակարգեր։ Սոքա բազկանութիւն յաղմողներից և նուաճածաներից, իսկ այս վերջնները բազկացած էին քաղաքացիներից (կամ վիլաններից) և սէրվերից (կամ ստրուկներից), եսկ միջն դասակարգը այն է արուեստաւորները և վաճառականները, որոնք մի երկրի հարստանալու զլխաւոր միջոցներ են, բոլորովին չկային։ Եւ ովկ կպարապէր այդ գործերով, երբ ոչ գիշեր և ոչ ցերեկ ապահովութիւն չկար, այլ անպատիժ յարձակութիւն կալուածապետները վաճառականների վերաց, նոցա ապրանքները յափշտակութիւն, և երբ իսեղճ ժողովրդի գոյքը և սեփականութիւնը հզօր անձի կամակատարութեան նիւթ էր գարձած։ Երկրագործութիւնն ևս չէր կարող զարգանալ, որովհետեւ խեղճ սէրվը (ստրուկը) այսօր մշակում երկիրը, իսկ միւս օր երկու աւատականներ կկռուեն և ոտնակոխ կանեն արտերը։

Դիտութեան մէջ ևս, որը վանքերի հովանաւորութեան ներքոյ զարգացաւ, միևնույն պատերազմն ենք տեսնում։ բայց ոչ թէ զէնքով պատերազմի գաշտում, այլ խօսքով, զրչով և թղթով։ ԺԱ, գարում զարգացաւ զպրոցական կոչված փիլիսոփայութիւնը, որը բոլորովին զուրկ էր զրական տեղեկութիւններից։ Պրականութեան մէջ մենք տեսնում ենք միևնույն բաժանումն։ Քօմանների (սիրապատումների) հերոսները աւատական զասիցն էին միայն, որովհետեւ սէրը որ աւատական սիրապատումների զլխաւոր բովանդակութիւն էր կազմում, միայն աւատական արխստօկրատի սըտին հասանելի դրացմունք էր համարվում։ և ոչ անոնք վիլանի (նոցա խօսքով)։ Աւստի հասարակ ժողովրդի մէջ ևս իւր զրականութիւն ծաղկեցաւ, առակը (fabliau), որով ժողովրդի կծողական խելքը ծաղրում էր աւատականների ծիծաղելի քաջագործութիւնները։

Այս աւատական կարգերն էին տիրապետում Ժ. զարից մինչև ԺԴ. զարը։ Սակայն աւատականութիւնը միայն մութ կողմեր չուներ, այլ նա ուներ և պայծառ կողմեր, նորա պատմական արժանիքն է ա), որ զարգացրեց անձնական արժանաւորութիւն ճանաչելու զգացմունքը, նպաստեց ընտանեկան կեանքի զարգացմանը և բ), նորանից յառաջացաւ ասպետականութիւնը ԺԱ. գարի վերջում, որը միջն գարերի ամենամիթարական երեսյթներից մին կարելի է համարել։

Առեւունունէն կարելի է անուանել ազնիւ զինւորների ընկերութիւն, որոնք ոգեսորված էին սիրով առ Աստուած։ առ կին և առ փառք։ Ասպետները, չնոյելով ազգութիւնների տարբերութեանը, ունեին միևնույն իրաւունքներ, միևնույն արտօնութիւններ, չնազանդում էին միևնույն օրէնքներին, կարգերին և կանոններին։ Ասպետականութեան արմատը գտնվում էին գերմանացիների սովորութիւնների և կենցազավարութեան մէջ, և նորան զարգացրին աւատականութիւնը, փոխելով չին գերմանական սովորութիւնները, հոգեորականները և բանաստեղծութիւնները, հոգեորականները և բանաստեղծութիւնները։ Աւատականութիւ-

Նը ասպետականութեան շվալիէ (chevalier) անուն տուաւ և որոշեց նորա պարտականութիւնները դեպի տէրութիւնը, Հոգեռորականները յօրինեցին զգացմունքի վերայ հիմնված նորա կանոններ և որոշեցին նորա պարտականութիւններ դեպի եկեղեցին: Քանաստեղծները ոգեռեցին ասպետներին յափշտակութեամբ և վառեցին նոցա երեակայութիւնը:

Ասպետականութիւնը մի որոշեալ երկրին չէր պատկանում: այլ նա տարածվեցաւ այն տեղերը, ուր որ գնացին արեւմտեան քրիստոնեանները: Սակայն ասպետականութեան օրինակելի աշխարհը կարելի է համարել հարաւային Փրանսիան: որովհետեւ այստեղ նա հասաւ իւր կատարեալ զարգացմանը, այստեղ նա ստացաւ իւր առաջին օրէնսգիլբը և այստեղից գուրս եկան առաջին անգամ նորա փառքը գովարանող բանաստեղծները:

Քարի ասպետը որոշվումէր ։) արիւնի ազնուութեամբ: ։) ձի և զէնք գործածելու հնարագիտութեամբ և ։) անարատ կեանքով: Նա պարտական էր հաւատարիմ լինելու կրօնին և իւր խօսքին (loyal): Նա պիտի պաշտպանէր թողերին և թշուառներին (մանաւանդ որբերին: այրիներին և աղքատներին): Նա պիտի լինէր քնքոյշ և քաղաքավարի գէղի կիւր (courtois et galant): Նորա մէջ զարգացած պիտի լինէր պատուածանաշութեան զգացում (point d'honneur), որը նա պիտի պաշտպանէր ամենափոքր վիրաւորանքից: Նորա պարտականութիւնները կարելի է արտայայտել նորա նշանաբանով: Dieu et madame (Աստուած և տիկին): Ասպետական կոչման այսպիսի բարձր գաղափարի պատճառով, ասպետականութեան մէջ մտնելու համար հարկաւոր էր պատրաստվել մանկութենից: և նոյն ինքն մուտ գործելը լինումէր զանազան քննութիւններով և ծէսերով:

Ասպետականութեան այսպիսի բարձր նշանակութիւն տալու նպատակն էր նորան սուրբ խորհրդի կարգը գասել և մարդիս, ձգտմունքի ամենաբարձր նպատակը շինել:

Ասպետների զպրոցները համարվումէին աւատապետների ամրոցները, երբ մանուկը լինումէր ։) տարեկան ։) նա գնումէր այն աւատապետի ամրոցը, որի վասսալ համարվումէր իւր հայրը և այնտեղ ստանումէր պաժի կոչումն: Նա այնտեղ մի որեիցէ տիկնոջ կամ աւատապետի մօտ պաշտօն էր ստանում և պարտական էր աւատապետի և նորա տիկնոջ հրամաններին հնազանդելու և նոցա սրբութեամբ կատարելու: Նա միևնույն ժամանակ ուսանումէր իւր ապագայ կոչման վերաբերեալ բոլոր կանոնները այն է սէր առ Աստուած, առ կին և առ փառք և կրթվումէր միանգամայն ամենավտանգաւոր վարժմունքով: Նա սովորումէր զէնք գործածել, ձի հեծնել: Հնարագիտութիւնը, ուժեղութիւնը ասպետ լինելու զինաւոր պայմաններ էին համարվում: որովհետեւ յառաջազայն շվարժված ասպետը հազիւ կկարողանար կրել իւր վերայ այնքան երկամ, որից բաղկանումէր կատարեալ ասպետի զէնքը: Ամրոցում խնջոյքներ էին լինում: և սոցա մասնակցումէին ասպետներ, տիկիններ, պաժեր և տուրնիրների երդիչներ, որոնք գովարանումէին ասպետների քաջազործութիւնները և վաճագործութիւնները:

պատերի երեակայութիւնը և նոցա մէջ սէր էին զբուռմ դէպի ասպետական քաջագործաւթիւններ։ Երբ պաժը լինումէր 14 կամ 15 տարեկան, նորան տանումէին եկեղեցի մէջքին կապումէին վզակաղ և այնուշետենա կոչվումէր զինակիր (ecuyer) և լինումէր ասպետի անբաժան ընկեր և համարվումէր նորա կրտուեր եղբայր։ Նա պարտական էր կամ ասպետի պատիւը և անձը պաշտպանել (écuyer de corps et d'honneur) և կամ ամրոցում՝ զանազան սպասաւորութիւններ (écuyer de chambre) անել։ 14 տարուան անարատ կեանքը պաժի և զինակիր կոչմամբ պատկվումէր ասպետութեամբ 21 տարեկան հասակում։ Սորա համար նշանակվումէր օրհնութեան օրը։ Նախընթաց օրը նա լուացվումէր քաղանիքում և ամրոց գիշերը անցուցանումէր աղօթքավ։ Միւս օրը նորան տանումէին եկեղեցի սպիտակ շորեր հագած։ Պատարագից յետոյ քահանան նորան հաղորդեցնումէր և երգում էր առնում նորանից որ նա կկատարէ բարի և աղիւ ասպետի բոլոր պարտքերը յիտոյ աւտատապետ ասպետը կատարումէր ակկոլադ (accolade) կոչված ծեսը այսինքն սրով երեք անգամ խփումէր նորա մէջքին կամ զին կամ զինին ասելով, «յանուն Աստուծու սուրբ Միքայէլի և սուրբ Գեորգի տաքիս եմ քեզ ասպետութիւն»։ Նորընծան դուրս գալով եկեղեցուց հեծնումէր թամրած և գեղեցիկ զարդերով զարդարված ձի և ժողովրդի աղաղակներով և բացազանցութիւններով զնումէր ամրոց։

Աւատական ոգու զիմաւոր պահապանն էին տուբնիքները, որոնք նման էին յունական Ալիմպիական խաղերին և որոնց մասնակցումէին միայն ասպետները։ Նոքա աշխատումէին մին միւսին նսեմացնել քաջութեամբ։ Խաղերը կայանումէին նիզակով և սրով պատիրազմելու մէջ։ Տուբնիքների ժամանակ մի բանի օրով աւատապետների ամրոցները լցվումէին բազմութեամբ։

Յաղթող ասպետը դատարի վճռով ստանումէր տուբնիրի թագուհուց ոսկէքար գոտի։ Վզակապ ոսկէ սուրբ ոսկէ շղթայ, ոսկէ գաւաթ ելն։

Ասպետութեան իրաւունքներից մին զրուագ ունենալն էր։ Դրուագները թեև հնուց գործ էին ածվում բայց մեծ նշանակութիւն այս ժամանակում ստացան։ Դրուագների վերայ նկարումէին զիմաւորապէս խաչեր, մարմիններ, կենդանիներ, մոչաւններ բյուսեր և այլն և փորագրվումէին ասպետների զէնքերի, սաղաւարտների, վահանների և ամրոցների վերայ։ (Դրուագիտութիւն)։

ԺԴ. զարից ասպետականութիւնը ընկնումէ։ Ասպետները այս ժամանակից իւրեանց զէնքը նուիրումեն ոչ թէ թշուասներին և թոյլերին պաշտպանելու այլ ասպետակութեան և աւազակութեան։ Դէպի կինը ունեցած յարգանքը փոխվումէ զզուելի քաղաքավարութեան և անասակութեան։ պատուասիրութիւնը զառնումէ զիւրագրգւութեան և շատ կոիմերի առիթ, և առհասարակ անկման ժամանակի ասպետները որոշ օրէնքներով չէին կառավարվում, այլ իւրեանց քմահաճութեամբ և կամքով։

Թէպէտե ասպետականութեան մէջ կան այնպիսի պակասութիւնները որոնք  
մեղ համար ծիծաղական են, և զլիառոր պակասութիւնը արհամարհանքն  
էր գէպի աղնիւ խաղաղ աշխատութիւն և մտաւորական կրթութիւնը ու  
կայն ոչ միայն միջնադրեան ազգերը, ոյլ նոյնինքն մենք նորանից շատ բան  
ունինք առած: Կօշտութեան և բարբարոսութեան միջացում, մաքուր բա-  
րոյականութիւն քարոզելով ասպետեցին բարյականութեան,  
աղնուութեան: արգարակատութեան: մարդուիրութեան սկզբունքի տա-  
րածվելուն: Բարձրացնելով կինը և տալով նորան իրաւունք կեանքի մէջ,  
աղնուացրին և բարձրացրին ընտանեկան կեանքը և վերջապէս ասպետա-  
կանութիւնը բոլորովին բանաստեղծական երևոյթ լինելով: բարերար ազ-  
գեցութիւն ունեցաւ բանաստեղծութեան և գրականութեան զարգացման  
վերայ միջին գարերում:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԸՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՔՆՆՈՒԹԻՒՆԸ, (Արարատ, Է 5):

Հայկական ծննդարանութեան առաջին անձն Հոյէ, սկզբում մի ցեղի,  
իսկ վերջը բոլոր Հայերի վիպանուն դարձածը, հայկական ազգի անձնաւո-  
րումն է, որը մինչև այսօր ևս Հայ կանուանի:

Տարեգիրը կամէ: «Ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բէլայ» յետ  
ծնանելոյ զորդի եւր զԱրմենակ ի բաբելոնէ, չու արարեալ գնայ յերկիրն  
Արարադայ, որ է ի կողման հիւսիսոյ: Ինչպէս մտաւ արդեօք այստեղ  
Բարելոն: Պատահմամբ արգենք ժողովողի ձեռով, թէ արդարե կար նա  
աւանդութիւնների մէջ: Մենք աւելի համաձայն ենք վերջինս ընդունելու,  
նկատելով նորա մէջ արդարե պատմուկան փաստի նշմարանք:

Հին Ասորեստանի արձանագրութիւններն Հայաստանի բնակիչներին ս--  
րբառ կանուանեն: Բայց շատ անգամ փոխանակ այս անունի գործ կածվի  
միւսը, որը Ա.Ի.-Շէ կեարգացվի (տես Սարգ. արձանագ. I, 21). Միւնոյն  
արձանագրութիւնների մէջ այս Ա.Ի.-Շէ անունով կանուանվին Բարելոնի  
հին բնակիչները, որոնք Սեմական չեն: Արդէն արձանագրութիւնների մէջ  
այս անունի նոյնութիւնից կիմացվի Հայաստանի հարաւային մասի բնա-  
կիչների հին Բարելացինների հետ ունեցած ազգակցութիւնը: Եթէ մենք  
այս անունը փոխանակինք Քաղցէացիններին ծանօթ մի ուրիշ անունով,  
այն ժամանակը միւնոյն եղանակացութեան կգանք: Ցայտնի է, որ Քսէնօ-  
ֆօնտ (Անա. IV, 3: V, 5) իւր Ճանապարհորդութեան միջոցին կհանդիպի  
Քաղցէացիններին հարաւ — Հայկական կամ Քարդելեան սարերում: Իսկ  
թէ Քաղցէացինները Բարելոնի հին բնակիչներ էին, կարեսրութիւն չկայ  
խօսելու՝): Այսպէսով մենք կտեսնենք, որ Միջազնորի սահմաններում և

1) Աւելի հանգամանօրէն քննված է այս հարցը Essai de Commentaire des fragments cosmogoniques de Beroe par Fr. Lenormant, Paris, 1872<sup>րդ</sup>, 48—55.